«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Քալաշյան Ս.Ա.
«23» հունիսի 2026 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ՝ դոցենտ Մարանգուլյան Հ.Վ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն (1-ին կիսամյակ)

Մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

1. Ներածություն

«Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն» դասընթացը բակալավրիատի ուսումնական ծրագրի առարկաներից է: Այն բարձրագույն իրավաբանական կրթության առարկաների համակարգում իր ուրույն և կարևոր է տեղն է զբաղեցնում:

Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն հումանիտար, հիմնարար, պատմական բնույթի ընդհանրացնող և իրավագիտության համար մեթոդաբանական տեսակետից կարևոր նշանակություն ունեցող գիտություն է՝ առանձին դարաշրջաններին բնորոշ և տարբեր պետություններում պետության և իրավունքի գոյության և զարգացման ընդհանուր և հիմնական օրինաչափությունների մասին:

Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն ուսումնասիրության **<u>օբյեկտը</u>** տարբեր դարաշրջաններում առանձին պետությունների հասարակական կարգի, պետական մեխանիզմի առանձնահատկությունների ուսումնասիրությունն է, դրանց օրենսդրության ու իրավունքի աղբյուրների հետազոտումն է:

Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն ուսումնասիրության օբյեկտի շրջանակներում և սահմաններում մշտապես առաջ են գալիս մի շարք խնդրահարույց հիմնախնդիրներ, որոնք անհրաժեշտ է լինում արժանացնել հետազոտման, ուսումնասիրության կամ վերլուծության: Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն ուսումնասիրության **<u>առարկան</u>** իրենից ներկայացնում է տարբեր դարաշրջաններում առանձին պետությունների հասարակական կարգին, պետական մեխանիզմին օրենսդրությանն ու իրավունքի աղբյուրներին վերաբերող առավել խնդրահարույց և ուշագրավ պետաիրավական երևույթների հետազոտումը:

Ըստ էության, «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմությունն» ուսումնասիրում է առանձին օտարերկրյա երկրների պետություններն ու իրավական համակարգերը՝ դրանց ծագման ու զարգացման պրոցեսում, ժամանակագրական հերթականության մեջ՝ վեր հանելով ինչպես առանձին ժամանակաշրջանների համար առավել բնորոշ օրինաչափություններ, այնպես էլ կանգ առնելով տվյալ դարաշրջանի համար առավել առաջադիմական ու հեղափոխական պետաիրավական երևույթների վրա:

«Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմությունն» հիմնարար բնույթով պայմանավորված, այն փոխկապված է ոչ միայն ճյուղային իրավական գիտությունների, այլ նաև պատմական, քաղաքական, փիլիսոփայության, սոցիոլոգիայի և տնտեսական գիտությունների հետ:

Առավել մանրակրկիտ ներկայացվում են կոնկրետ պետությունների «հասարակական կարգ/եր/ը», «պետական կարգ/եր/ը», «պետական ապարատը/մեխանիզմը» և հատկապես՝ տվյալ ժամանակաշրջանի կարևորագույն «իրավունքի աղբյուրները»՝ լինեն դրանք «օրենքների», «դատական նախադեպերի», թե «իրավական սովորույթների» դրսևորմամբ։

Բնականաբար, վերը նկարագրված պետաիրավական և հասարակական երևույթների շրջանակում առանձնակի ուշադրության արժանանալու են հասարակական, պետական այն երևույթներն ու կառույցներն և իրավունքի այն աղբյուրները, որոնք իրենց ժամանակաշրջանի համար ունեցել են «առաջադիմական», «հեղափոխական» բնույթ և ազդեցություն են ունեցել այլ հարևան կամ հեռավոր երկրների հասարակական և պետաիրավական հետագա զարգացման ուղու /վեկտորի/ համար։

Նեղ իմաստով «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմությունը» երբենն անվանում են «օրենսդրությունների համեմատական պատմություն» (Я.М. Коркунов).

Սակայն հաշվի առնելով որ այն հանգամանքը, որ իրավունքը, ինչպես և առանձին ազգերի ու ժողովուրդների լեզուն, մշակույթը, բարքերը, ավանդույթները, թեև պարունակում են նաև բազում անհատական տարրեր, սակայն միաժամանակ իրենցից ներկայացնում են (հատկապես ներկայիս գլոբալիզմի դարաշրջանում) «անթիվ [փոխ]ազդեցությունների և փոխառությունների արդյունք» (Новгородцев П.И. Из лекций по общей теории права. Часть методологическая. М., 1904. С. 46), «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմությունն» իրենից ներկայացնում է նաև, լայն իմաստով, իրավական սովորույթների, օրենքների պատմություն, որն անհրաժեշտ է ուսումնասիրել պետության ընտրած ուղու, պետության առջև ծառացած նպատակների, պետական հարկադրանքի և հասարակական բարքերի, սովորույթների, հասարակական կարծքիքի ճնշման և դրանց հետ փոխադարձ կապի, ինչպես նաև օտարերկրյա պետությունների ազդեցության, փոխազդեցության, և նույնիսկ, այստեղ ևս՝ «ճնշման» ներքո։

«Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմությունն» գործնական արժեքը մասնավորապես դրսևորվում է իրավաստեղծ և/կամ իրավակիրառ գործունեության ոլորտում իրավական ակտեր ընդունելիս ընդհանրացված պատմական փորձի հետ հաշվի նստելու հրամայականի իմաստով։

Դասընթացի կապն ուսումնական պլանի այլ առարկաների հետ։ «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն» դասընթացը սերտ փոխկապված է «Պետության և իրավունքի տեսություն», «Քաղաքական և իրավական ուսմունքների պատմություն», «Իրավունքի փիլիսոփայություն», «Քաղաքագիտություն», «Փիլիսոփայություն» և այլ ուսումնական դասընթացների հետ։

Դասընթացի նպատակը և խնդիրները: Դասընթացի հիմնական նպատակը ուսանողների մոտ պետության և իրավունքի առաջացման, պետության տիպերի, ձևերի, գործառույթների, պետության մեխանիզմի, պետության քաղաքական համակարգում պետության տեղի և դերի վերաբերյալ գիտելիքների ձևավորումն է, իրավունքի հասկացության և էության, իրավագիտակցության, իրավունքի աղբյուրների, իրավունքի նորմերի, իրավական համակարգի, իրավաստեղծագործության, իրավակիրառման, իրավունքի մեկնաբանման, իրավաբանական պա¬տասխանատվության մասին գիտելիքների ձևավորումն է, ինչպես նաև մասնագիտական մակարդակի իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորումը:

Դասընթացի խնդիրները: հասարակական քաղաքական կյանքի պետաիրավական երևույթների ուսումնասիրությունը, պետության և իրավունքի գոյության և զարգացման ընդհանուր և հիմնական օրինաչափություն¬ների ուսումնասիրությունը, մասնագիտական արհեստավարժության ձևավորումը, պետաիրավական երևույթները վերլուծելու, ստացված տեսական գիտելիքները ճիշտ կիրառելու կարողություն ձևավորելը: Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խդիրները.

- Ապահովել անհրաժեշտ գիտելիքներ պետաիրավական ոլորտում մարդկության պատմական լավագույն փորձի մասին.
- Ուսումնասիրել պետական ինստիտուտների զարգացումը պատմական տարբեր դարաշրջաններում և տարբեր երկրներում.
- Իրականացնել հիմնական իրավական հուշարձանների և աղբյուրների ուսումնասիրությունը, որոնք ունեցել են իրենց ազդեցությունը ժամանակակից պետական իրավական մշակույթի ձևավորման վրա.
- Ուսումնասիրել, համեմատել և վերլուծել աշխարհի տարբեր ժողովուրդների մոտ ձևավորված իրավական համակարգերի և պտաիրավական ինստիտուտների ձևավորման և զարգացման հիմնական փուլերը:

2.1. Կրթական վերջնարդյունքները: Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

իմանա՝

- Ինչ պատմական զարգացման փուլեր է անցել ժամանակակից պետությունը:
- Ինչ պատմական զարգացման փուլեր է անցել ժամանակակից իրավունքը:
- Առանձին պետություններում ինչ հասարակական կարգեր են եղել:
- Առանձին պետություններում ինչ պետակա կարգ է գոյությունն ունեցել:
- Արտասահմանյան երկրներում իրականացված պատմակն բարեփոխումները:

- ուսանողը պետք է պատկերացում ունենա «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն» «դասընթացում շարադրված հիմնական հասկացությունների և կատեգորիաների մասին:

կարողանա՝

- ինքնուրույն եւ համակողմանիորեն կիրառել մասնագիտական գիտելիքներ նոր եւ անծանոթ իրադրություններում տեսական եւ գործնական իրավական հիմնախնդիրների լուծման համար;
- ինքուրույն գտնել, դասկարգել եւ համակողմանի ու համակարգված մոտեցմամբ փաստարկված մեկնաբանել պետահիրավական կամ այլ բնույթի տեղեկատվություն, որն անհրաժեշտ է մասնագիտացման ոլորտում խնդրի լուծման համար,
- ինքնուրույն օգտագործել գիտական հետազոտության մեթոդներ՝ մասնագիտական գործունեություն ծավալելիս եւ անհրաժեշտ հետազոտություններ իրականացնելիս,
- իրավաստեղծման, իրավակիրառման եւ մեկնաբանման ժամանակ հասկանալ քաղաքական, սոցիալական, տնտեսական, պատմական, անձնային եւ հոգբենական գործոնները:

ունակ լինի՝

- աշխատել թիմում, ավելին՝ ղեկավարելու համատեղ թիմային աշխատանքը, կիրառել պատմական փորձը ժամանակակից պետահիրավական ինստիտուտների կատարելոգործման համար:
- Ինքնուրույն ուսումնասիրելու տարբեր երկրների օրենսդրության փոփոխությունները, իրավական գրականությունը, ինքնակրթվելու և մասնագիտական որակավորումը շարունակաբար բարձրացնելու, հարափոփոխ բազմամշակութային աշխատանքային միջավայրում ինտեգրվելու, ինչպես նաև տեսական հետազոտությունների համար գիտական մեթոդներ կիրառելու նախնական հմտություններին:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	144

1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**64**
1.1.1.Դասախոսություններ	**32**
1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**32**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**80**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	
1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**Ստուգարք**

2.3. Առարկայի ծավալը՝ 144 ժամ, կրեդիտ՝ «4» ECTS:

2.4. Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	**2=3+4**	**3**	**4**
ԹԵՄԱ 1. Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմության օբյեկտը, առարկան, մեթոդները և տեղը իրավագիտություն ուսումնասիրող գիտությունների համակարգում	**8**	**4**	**4**
Թեմա 2. Անցում դեպի պետություն: Նախնադարյան իրավունք.	**8**	**4**	**4**
Թեմա 3 Հին Արևելքի պետությունն ու իրավունքը	**8**	**4**	**4**
Թեմա 4 Անթիք աշխարհի պետություն և իրավունք	**16**	**8**	**8**
Թեմա 5 Միջնադարյան իրավունքին բնորոշ գծերը և զարգացման հիմնական փուլերն՝ ըստ առանձին երկրների	**8**	**4**	**4**
Թեմա 6 Միջնադարյան Ֆեոդալական պետությունների առաջացումը և	**8**	**4**	**4**

զարգացման հիմնական փուլերը			
Թեմա 7. Մուսուլմանական իրավունքի առաջացումը և Արաբական խալիֆայություն	**8**	**4**	**4**
Ընդամենը	**64**	**32**	**32**

3. Դասընթացի թեմաները եւ ծավալները:

ՄՈԴՈՒԼ 1

ԹԵՄԱ 1. Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմության օբյեկտը, առարկան, մեթոդները և տեղը իրավագիտություն ուսումնասիրող գիտությունների համակարգում:

Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմությունը որպես հումանիտար գիտություն: Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմությունը որպես իրավաբանական գիտություն: Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմության օբյեկտը, առարկան: Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմության մեթոդոլոգիան: Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմության գործառույթները: Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմության ուսումնական դասընթացը: Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմության տեղն ու դերը իրավագիտություն ուսումնասիրող գիտությունների համակարգում:

ԹԵՄԱ 2. Անցում դեպի պետություն: Նախնադարյան իրավունք.

Դեպի պետություն անցման հիմնական պատճառները: Դեպի պետություն անցման գործընթացը: Պետությունների կազմավորման հիմնական ուղիները: Ռազմական ժողովրդավարություն: Պրիմիտիվ իրավական սովորույթների գոյության հնարավորության հիմնախնդիրը մինչպետական շրջանում, գիտական մոտեցումների բազմակարծությունը: Արյան վրեժը:. Արյան վրեժի սահմանափակումն ու փոխարինումը. Պատիժները մինչպետական ժամանակաշրջանում

ԹԵՄԱ 3. Հին Արևելքի պետությունն ու իրավունքը.

Արևելյան բռնապետության հասկացությունը և բնորոշ գծերը. Հին Եգիպտոս: Պետական իշխանությունը Հին Եգիպտոսում՝ փարավոն և վեզիր (ջաթի): Հասարակական կարգը: Հին Եգիպտոսի իրավունքը, իրավունքի աղբյուրների

համակարգը, քրեական, ամոսնաընտանեկան և քաղաքացիական իրավունքի բնորոշ գծերը: Հին Հրեաստան, Իսրայելի և Հրեաստանի տարածքը: Մովսեսի օրենքները: Թալիոնի սկզբունքը: Հին Հրեաստանի դատարաններն ու դատավարությունը: Հին Միջագետք: Շումերական քաղաքակրթություն: Հին Բաբելոն: Համմուրաբի թագավորի օրենքների բնութագրերը: Գույքային հարաբերությունների կարգավորում. Ամուսնություն, ընտանիք և ժառանգություն: Խեթական օրենսդրությունը: Հին Հնդկաստանի քաղաքակրթությունը: Աշոկայի կայսրությունը, Գուպտայի կայսրություն. Վեդայական տիպի պետություն. Վարնաներ և կաստաներ: Երկրի տարածքային և վարչական կառուցվածքը. Պետական իշխանության կազմակերպումը: Վեդայական իրավական համակարգ: Սուտրաներ և Շաստրաներ. Մանուի օրենքները: Հին չինական իրավական քաղաքակրթություն: Ցին դարաշրջան. Չժոուի դարաշրջան. Ցինի դարաշրջան և առաջին կենտրոնացված պետության կազմակերպում: Հին չինական իրավական գաղափարախոսություն: Լաո-Ցզի և Կոնֆուցիուս: Բնակչության հիմնական խմբերը. Հին չինական համայնք. Շան Յանի ու Վան Մանի բարեփոխումները:

ԹԵՄԱ 4. Անթիք աշխարհի պետություն և իրավունք.

Հունական ցեղերի բնակեցումը Բալկանյան թերակղզում: Հին հունական գաղութները: Աթենքի հասարակական կարգը: Աթենքում ժողովրդավարության հաստատումը: Թեսեյի, Դրակոնի, Սոլոնի, Կլեիսֆենի, և Պերիկլեսի բարեփոխումները: Պետական իշխանության մարմիններ: Արխոնները և պետական պաշտոնների համակարգը: Օրենսդրական գործընթաց Աթենքում: Դատարան և դատավարությունը Աթենքում: Հին Աթենքի իրավունքի աղբյուրների համակարգը: Սպարտայի քաղաքական համակարգը: Լիկուրգի օրենսդրությունը: Գերոնտներ և Էֆորներ: Սպարտայի հասարակական և պետական կարգը: Հին Հռոմի պետությունն ու իրավունքը: Հռոմը թագավորների օրոք: Հանրապետության կազմավորումը: Հանրապետական մագիստրատուրայի համակարգը: Հանրապետության ճգնաժամը: Հռոմեական իրավունք: Հռոմեական իրավունքի և իրավական համակարգի զարգացման հիմնական փուլերը: Հռոմեական իրավունքի աղբյուրները: Հռոմեական իրավունքի հիմնական ինստիտուտները: Հռոմեական իրավունքի առանձին ճյուղերը: Հռոմեական իրավունքի պատմական նշանակությունը:

ՄՈԴՈՒԼ 2

ԹԵՄԱ 5 Միջնադարյան իրավունքին բնորոշ գծերը և զարգացման հիմնական փուլերն՝ ըստ առանձին երկրների

Եկեղեցական (կանոնական) իրավունք: Իրավունքի աղբյուրների համակարգը Արևելքում և Արևմուտքում: Բյուզանդական իրավունք: Ֆեոդալական սեփականության իրավունքը Արևմտյան Եվրոպայի նահանգներում: Արևմտյան Եվրոպայի ֆեոդալական պետությունների ամուսնության և ընտանեկան իրավունքը:

Արևմտյան Եվրոպայի ֆեոդալական պետությունների քրեական իրավունք և դատավարություն։

ԹԵՄԱ 6 Միջնադարյան Ֆեոդալական պետությունների առաջացումը և զարգացման հիմնական փուլերը

ֆեոդալիզմի բնութագիրն ու հիմնական փուլերը։ Միջնադարյան պետության և իրավունքի առաջացումը Եվրոպայի և Արևելքի երկրներում։ Կալվածքներ և դասեր։ Վաղ ֆեոդալական միապետություն։ Դասային-ներկայացուցչական միապետություն։ Բացարձակ միապետություն։ Թագավորը և նրա արքունիքը։ Ֆրանկների պետությունը։ Ալոդի առաջացումը։ Շառլ Մարտելի բարեփոխումները։ Ֆրանկների պետական համակարգը Մերովինգների և Կարոլինգների օրոք։ Ֆրանսիայի ֆեոդալական պետության ձևավորումը։ Քաղաքական ապակենտրոնացում։ Միջնադարյան Ֆրանսիա։ Պետական իշխանության կենտրոնացման գործընթացը։ Բացարձակ միապետության հաստատում։ Վաղ ֆեոդալական պետություն Գերմանիայում։ Գերմանիան՝ տարածքային մասնատման ժամանակաշրջանում։ Անգլիայում Վաղ ֆեոդալական միապետությունը (IX - XI դդ.)։ Նորմանդական նվաճումը և դրա ազդեցությունը Անգլիայի հասարակական-քաղաքական զարգացման վրա։ Ընդհանուր իրավունքի դատարաններն ու «արդարության» դատարանը։ Թագավորը և խորհրդարանը։ Թագավորը և եկեղեցին։ Անգլիայի 1215 թվականի «Magna Carta»։ Բացարձակ միապետություն Անգլիայում։ Անգլիական հեղափոխությունը։ Բյուզանդական պետության և իրավունքի հիմնական բնութագիրը։

ԹԵՄԱ 7 Մուսուլմանական իրավունքի առաջացումը և Արաբական խալիֆայություն

Արաբական խալիֆայության հասարակական-քաղաքական համակարգը 7-10-րդ դդ.։ Արաբական խալիֆայության իրավունքի հիմնական հատկանիշները։ Մուսուլմանական իրավունքի հիմնական աղբյուրները։Մուսուլմանական իրավունքի լրացուցիչ աղբյուրները։

4. Գրականության ցանկ

Հիմնական՝

1. Ա.Պ. Արշակյան, Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն, Երևան, 2003թ.
2. О. А. Жидкова, Н.А. Крашенинникова, История государства и права зарубежных стран (в 2-х томах), М. 2005.
3. О. А. Омельченко, Всеобщая история государства и права (в 2-х томах), М. 2006.
4. З. М. Черниловский. Всеобщая история государства и права. М. 2005.
5. В. М. Курицин, Савельев В.М. Всеобщая история государства и права. М. 2006.

6. В. Г. Графский, Всеобщая история государства и права, М. 2006.
7. К. И. Батыр, И. И. Исаев, История государства и права зарубежных стран, М. 2006.
8. П.И. Галанза, История государства и права зарубежных стран. Под ред. П.И. Галанзы. М., 1969 г.
9. Прудников М. Н. История государства и права зарубежных стран : учеб. для вузов, М.2006.
10. К. И. Батыр, Хрестоматия по История государства и права зарубежных стран, М. 2006.
11. В. Н. Садиков, Хрестоматия по История государства и права зарубежных стран, М. 2006.
12. Ю. Г. Мсрян, История государства и права зарубежных стран, Учебно-методическое пособие, РАУ, Ереван, 2005г.
13. Н.А. Крашенинникова, История государства и права зарубежных стран, Учебно-методическое пособие, М. 2005.

Լրացուցիչ գրականության ցանկ՝

1. Réné David, Camille Jauffret-Spinosi, *Les Grands Systèmes de droit contemporains*, DALLOZ, 11-ième edition, Paris, 2002.
2. Glendon Mary Ann et Al., *Comparative Legal traditions: Materials and Cases on Western Law* Thompson West, 2007.
3. Merryman Clark and Haley, *The Civil Law Tradition: Europe, Latin American and East Asia,* Michie, 1994.
4. Общая теория государства и права. Академический курс в трех томах. Ответственныйредактор М.Н. Марченко.М., 2007
5. Нерсесянц В.С. Общая теория права и государства. – М., 2000
6. Марченко М.Н. Правовые системы современного мира. Учебник-пособие. М., 2008
7. Малько А.В., Соломатин, А.Ю.Сравнительное правоведение. Учебно-методический комплекс. М. 2008
8. Саидов А.Х. Сравнительное правоведение М., 2005
9. Толкование норм права: учебно-практ. пособие // А.В. Смирнов, А.Г. Манукян. – М.:Проспект 2008

5. Հարցեր եւ առաջադրանքներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար

Հարցաշար՝

1. Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմության հասկացությունը, օբյեկտն ու առարկան.
2. Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմության ունիվերսալ մեթոդները.

3. Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմության ընդհանուր տեսական մեթոդներ.
4. Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմության հատուկ մեթոդները.
5. Մինչպետական ժամանակաշրջանում գոյություն ունե՞ր արդյոք իրավունք։ Մոտեցումների բազմակարծություն.
6. Անցում դեպի պետություն՝ պատճառներն ու գործընթացը.
7. Ռազմական դեմոկրատիա.
8. Արյան վրեժը.
9. «Արևելյան բռանապետության» հասկացությունը.
10. Հին Հնդկաստանի հասարակական կարգը։ Վարնաներ և կաստաներ.
11. Հին Չինաստանի հասարակական կարգը։ Շան Յանի և Վան Մանի բարեփոխումները.
12. Հին Բաբելոնի հասարակական կարգը.
13. Հին Եգիպտոսի հասարակական կարգը.
14. Հին Հնդկաստանի պետական կարգը.
15. Հին Չինաստանի պետական կարգը.
16. Հին Բաբելոնի պետական կարգը.
17. Հին Եգիպտոսի պետական կարգը.
18. Հնադարյան իրավունքի «Աստվածային ծագումը».
19. Թալիոնի սկզբունքը.
20. Էվիկցիայի կանոնը Հին Աշխարհի երկրների իրավական համակարգերում.
21. Օբյեկտիվ մեղսայնացումը՝ որպես Հնադարյան իրավունքի սկզբունք.
22. Դատական փորձությունները.
23. Հանցանքների տեսակները Հին Աշխարհի երկրների իրավական համակարգերում.
24. Պարտավորական իրավունքը Հին Աշխարհի երկրների իրավական համակարգերում.
25. Ամուսնաընտանեկան հարաբերությունները Հին Աշխարհի երկրների իրավական համակարգերում.
26. Մանուի օրենքները
27. Արտխաշաստրա
28. Համուրապիի օրենքները
29. Թեսեյի բարեփոխումները Հին Աթենքում.
30. Սոլոնի բարեփոխումները Հին Աթենքում.
31. Պիսիստրատի և նրա որդիների բռնակալությունը Հին Աթենքում.
32. Քլիսֆենի բարեփոխումները Հին Աթենքում..
33. Հին Աթենքում ժողովրդավարության հաստատումն ու ծաղկումը.
34. Հին Աթենքի ժողովրդական ժողովը, նրա դերը, գործառույթներն ու իրավասությունները.
35. Հինգ հարյուրի խորհուրդը Հին Աթենքում, նրա գործառույթներն ու իրավասությունները.
36. Հելիեան Հին Աթենքում.

37. Ռազմավարներն ու Արխոններ Հին Աթենքում.
38. Աթենքի Դեմոկրատական Հանրապետության սահմանափակ և ստրկատիրական բնույթը.
39. Դրակոնի օրենքները և օստրակիզմը Հին Աթենքում.
40. Աթենքի իրավունքի հիմնական առանձնահատկությունները.
41. Սպարտայի սոցիալական համակարգը.
42. Սպարտայի հասարակական կարգը
43. Սպարտայի պետական կարգը
44. «Սպարտական կրթությունն» ու բանակը.
45. Հռոմեական իրավունքի հիմնաքարը՝ մարդիկ իրար հավասար չեն միմյանց: Եռակի անհավասարություն.
46. Սերվիուս Տուլիուսի բարեփոխումները.
47. Պետական կարգը Հռոմեական Հանրապետության օրոք (Ժողովրդական ժողով և սենատ).
48. Պետական ապարատը Հռոմի Հանրապետության օրոք (մագիստրատուրա).
49. Հռոմեական Հանրապետության ճգնաժամը և անցումը կայսրության.
50. Պետական կարգը Հռոմեական կայսրության օրոք.
51. Հռոմեական կայսրության սոցիալական կառուցվածքի փոփոխություններ.
52. Հռոմեական կայսրության քաղաքական համակարգը իշխանապետության ժամանակաշրջանում.
53. Դիոկղետիանոսի և Կոստանդինի բարեփոխումները.
54. Արևմտյան Հռոմեական կայսրության ճգնաժամը և անկումը.
55. Հռոմեական իրավունքի աղբյուրները.
56. Հռոմեական իրավունքի բաժանումը երեք համակարգերի՝ jus civile, jus praetorium, jus gentium: Բնական իրավունքի առաջացումը (jus naturale):
57. «XII աղյուսակների օրենքներ» (ստեղծման պատմություն, կառուցվածք, հիմնական ինստիտուտներ, դասակարգային էություն).
58. Սեփականության իրավունքի զարգացումը հռոմեական իրավունքում.
59. Դասական շրջանի պարտավորությունների հռոմեական իրավունք. Հռոմեական պայմանագրերի հիմնական տեսակները.
60. Դասական շրջանի հռոմեական ամուսնությունը, ընտանեկան և ժառանգական իրավունքը:
61. Քաղաքացիական դատավարության զարգացումը հռոմեական իրավունքում.
62. «Հուստինիանոսի կանոնագիրք/կոդիֆիկացիա» (ստեղծագործություն, կառուցվածք, բովանդակություն, պատմական նշանակություն).
63. Միջնադարյան իրավունքի ընդհանուր բնութագիրը.
64. Ֆրանսիական իրավունքի հիմնական առանձնահատկությունները (Օրենքի աղբյուրները և գույքային իրավունքը).
65. Ֆրանսիական իրավունքի հիմնական առանձնահատկությունները (Ընտանեկան և ժառանգական իրավունք; Քրեական իրավունք և դատավարություն):
66. Ֆեոդալական իրավունքի առանձնահատկությունները Գերմանիայում (Իրավունքի աղբյուրներ).

67. Ֆեոդալական իրավունքի առանձնահատկությունները Գերմանիայում (Ընտանեկան և ժառանգական իրավունք, Քրեական իրավունք և դատավարություն):
68. Ֆրանկների պետական համակարգը VI - IX դդ.
69. Վաղ ֆեոդալական միապետությունը Ֆրանսիայում.
70. Բացարձակ միապետությունը Ֆրանսիայում.
71. Վաղ ֆեոդալական պետություն Գերմանիայում.
72. Գերմանիան՝ տարածքային մասնատման ժամանակաշրջանում.
73. Անգլիայի նորմանդական նվաճումը և դրա ազդեցությունը երկրի պետական զարգացման վրա:
74. Անգլիայում 1215 թվականի «Magna Carta» (որդեգրման պատճառները, պատմական նշանակությունը).
75. Վաղ ֆեոդալական միապետությունը միապետություն Անգլիայում.
76. Բացարձակ միապետություն Անգլիայում.
77. Արևմտյան Եվրոպայի ֆեոդալական իրավունքի աղբյուրները.
78. Ֆեոդալական սեփականության իրավունքը Արևմտյան Եվրոպայի նահանգներում.
79. Արևմտյան Եվրոպայի ֆեոդալական պետությունների ամուսնության և ընտանեկան իրավունքը.
80. Արևմտյան Եվրոպայի ֆեոդալական պետությունների քրեական իրավունք և դատավարություն.
81. Արաբական խալիֆայության հասարակական-քաղաքական համակարգը 7-10-րդ դդ.
82. Արաբական խալիֆայության իրավունքի հիմնական հատկանիշները.
83. Մուսուլմանական իրավունքի հիմնական աղբյուրները.
84. Մուսուլմանական իրավունքի լրացուցիչ աղբյուրները:

6. Ստուգումների անցկացման ձևը եւ գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր եւ տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

Գնահատման չափանիշները՝ պատասխանի տրամաբանական կառուցում, տեսական եւ կիրառական գիտելիքների համադրում, օրինակներ բերելու ունակություն, տեսակետների պատճառաբանվածություն:

Ստուգարք. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները եւ ելույթների վերլուծության ունակությունը ստացված գիտելիքերի արդյունքում: